 ըզկամս արարչին . որ ազատիմ
 յանշէջ հրոյ գեհեներն :
 Այց թէ ուրացիր զկուսարն դի
 լահան . որք են ձեռաց գործիք
 արարեալք մարդկան . մերկացիր
 զխաւարն որ անգիտուէ . ծանիր
 զլոյս հաւատոյ անգիտութե .
 Ասքրիր մկրտութի յողտից մարմ
 նական . զգեցիր զհոգին շնորհց
 անըստառական . զերծիր ՚ի տան
 ջանաց յաւիտեանական . և լերբա
 ժին շնորհաց և արքայութե .
 Սի որք զկուսարն պաշտեն՝ մը
 տօք մուտք են . և զարարին
 անխի մտացեալք են . ցու
 ցից

ցից քեզ օրինակ թէ ում նը
մանք են. առական որ բանիւք
որ նըշանակեն :

● Առ-ի երբորդ : (Ե)

Սորդ մի ճընձղուկմ ետես և
ըմբռնեաց զնա . այլ նա սկըսաւ
խօսիլ և ասէ նըմա . թէ զիս ար
ձակիցես՝ քեզ բազում շահ կայ .
երեք բան խըրատ տամ՝ քեզ
օգուտ լինայ :

Լուի այրըն ճնձղկին և արձա
կեաց զնա . ելաւ նստաւ ՚ի ծառն
և ասաց նըմա . սկանչըս եզ նըմա
բարբառեցի նա . երեք խըրատն
այս եր զոր ասաց նըմա :

Լուե՛ թէ անաւատ բանից մի
աւտալ . և յայն տեղն որ չհաս
նիս ձեռօք մի՛ ձկտալ . զանցեալ
բանն որ զընաց՝ զայն մի՛ ամատ
ալ . ՚ի միտ առ ըղխըրատս և մի՛
ճոռանար .

Յայնժամ փորձեալ ըզնա և
դարձեալ ասէ • յիս կայ հանց
ճարդարիտ որ մեծագին է • պայ
ճառ և պատուհան և գեղե-
ցիկ է • որ քան ըզջայլամու հաւ
կիթ մի մեծ է •

Իսկ նա որ արձակեաց՝ եղև փո
շիման • գնաց դոյնըն նր վասն
արտամութե • ձգեաց զձեռն ըմ
բրանել ըզճընձղուկըն զայն •
Իսկ նա դարձեալ ասէ յիճար
ճարդոյն այն •

Ս Խորդ ասէ ըզխրասն իմ դու
ճառացար • և զուսն զոր ասացի
ուղղորդ իմացր • ՚ի ձեռդ է ի ան
կեալ՝ պահել շխրացար • զանցել
ըն հագացեր որ այլ չըկայ ճար •
Նոյնպս են որք կըռոց երկրպա
գուք են • և զձեռագործս իւր
եանց անսանունն • զանն անթ
իբաց թողեալ են • և զբարեաց



պարգևօղբն մտացեալ են :

Մեղ մի է ան հայրն աննա
կալ . և մի է միածինն հօր հա
ւասար . հոգին ճշմարտութե՛ն ՚ի
հօրէ բղխեալ . մտանկից միած
նին և ոչ բաժանեալ :

Մճամբ է երբակի՛ բնութք միա
կի . անուամբ է թեք կոչի՛ կամքն
է եղակի . բաժանեալ է յերես
ւանբաժանելի . երբեակն ՚ի միա
կէն անեղանելի :

Մինն ծընող կոչի անմարմին
բանին . մինն ծընունդ ասի հա
ւասար ծնողին . մինն ելումն ՚ի
հօրէ անձառ անբրննին . է իցրս
համօրէն միայն զխառոցին :

Մեղ է հայրն ան յա՛խտե՛նա
կան . անեղակից որդին ծընունդ
հայրական . անեղաբար հոգին՝
հօր համանրման . եակից միած
նին ՚ի գործ կատարման :





Արարիչ Հայր սափ Երկնի և Երկ
 րի արարչակից որդին էիցս ա
 մենի. կատարիչ սբ Հոգին սաեղ
 ծական սեռի. իմանալեաց՝ զդա
 լեաց՝ ծովու և ցամաքի .

Ամառ Հորըն լուսոյ արարած քս
 եղեն. մարդեղու թք բանին՝ զե
 բեալք փրկեցան. այ սբ Հոգւոյն
 նըման նորոգման. անեղ և անզը
 բաւ կենօք անվախձան .

Արդ դու թէ հաւատաս 'ի նա
 ապրեսցիս. մերառ թէ շնորհաց
 արժանաւորիս . 'ի փորձու թէց
 մեղաց կամաւ զերծանիս. անարտ
 մեղի կենօք միշտ մըխի թարիս .
 Քանզի փառք ՚իս այս անպի
 տան է . և թագաւորուի քո քեզ
 մտաւոյ շէ . այսոր դու վայելես՝
 վաղին այրոց է . անշէջ հար
 դեհենին՝ ձեզ պատրաստեալ է .

Այն լուսոյ լինիս այլ առակ ա
 ժԼ 176 սեմ.





սեմ. զոչ ինչ կեանքս աշխարհիս
 քեզ օրինակեմ. եթէ ունկընդը
 նես զոր ծանուցանեմ. կամիմ զի
 ՚ի մեզաց ըզքեզ ազատեմ.

● Ա - Ի Զորոբաբել Ը

Սարգ մի փախուցեալ էր ՚ի մի
 և զԶերե. գնացել ՚իխոր վերաց
 մինա հասանէ. ՚ի մեջ զըբին վի
 շաց մի մեծ տեսանէ. և հուր
 ՚ի բերանոյ նր բորբոքէ.

Իսկ ՚ի բերան հըբոյն զծառ մի
 տեսանէր. զձեռն ձրգեալ ու
 տիւք ՚ի նա հաստատէր. երկու
 մըկունք մին սև՝ մինն ըսպիտակ
 էր. հաստանէին ըզճիւղն որ
 ըմբռնեալ էր.

Չորս օձք ներքոյ ստից նր փօրե
 ին կամէին ընկենուլ զմարդն այն
 ՚ի զըբին. իսկ ՚ի ձրգէն այնմկ
 յոր մըկունքն էին. սակա՛ւ ինչ
 քաղցրութե մեզըր ծորէին.

ՍԻ

Իսկ



Իսկ նա մտաօք մտլար և յիմարել
 էր. որ զահ մեղքերու ին այն մո
 աացել էր. զգրբոյն և զվիշապին
 որ հուր բարբոքէր. անկմանն հայ
 էր մարդոյն որ զնա կրանէր :
 Օ զձեցն որք ՚ի ներքոյ ստից
 նորին կայր. զմելանցըն որք կրա
 րէին զճիւղն յոր յեցեալ կայր .
 զորոգայթս ամ մարդն այն մո
 աանայր . և ՚ի դեմքս ճրդին զսե
 րանըն բանայր :

Մեղքերուն մահու օրինակել
 է . վիշապն ահազնագոչ՝ ձայն դը
 ժ սխոցն է . վիրապըն խորագոյն՝
 գերեզմանիկն է . չորս իժքն ս
 տից ներքոյ՝ այն տարերացս է .

Մըկունք սեւաւ և սպիտակ՝ տիւ
 և գիշերն է . զայս ամ մարդկան
 ազգ մտաացել է . իսկ քաղցրու ՚ի
 մեղերն՝ ոչինչ կենցաղս է . որ
 օրատրանօք շարին կորուսանօղ է :

Եւ ի զայն յովասափ ե յոգւոց
 է հան . ե ՚ի կռապաշտութեցն
 եղև փոշիման . ասաց ճշնու՛որին
 Եր հայր պատուական . ուսո՛ ինձ
 զայլ խրրատ ոգւոյս փրկութե .
 Վանդի լուսու՛որիչ դու ինձ
 յայտնեցար . հանելով ՚ի բանտե
 զհոգիս իմ խաւար . արդ մար
 դարիս ունիս դու իանդին ճո
 հար . ե ես կամիմ ստանալ՝ հոգ
 իսկս իմ յօժար :

● Աստի շինգերորդ : Թ

Եւ ասկ մի այլ ասաց նա յովասա
 փին . Թէ երեք սիրելիք մարդոյ
 մի կային . զերկուքն մեծարեք
 խիստ յօժարագին . ե զմինն ոչ
 մեծարեք հաւասար նոցին :
 Երազատուի անկաւ այրն այն մե
 ծատուն . կողեց ըզբարեկմս զեր
 կոսին սիրուն . խնդրեաց ՚ինչնե
 ինչս ՚ի յօգնութի . ասաց Թէ

Գարտը ունիմ բողոսմ և անհուն,
 Լ'սաց թէ զիս կոչե արքայն 'ի
 յատեան. և ես բիւր քանքարոյ
 եղե պարտկն. յիշեցէք զառաջին
 գութըն սիրական. լերուք ինձ
 կարեկիցք յօրս այս նեղութն.
 Իսկ մինն ասե յինեն քեզ ճարկ
 չըկայ. բայց թէ երկու կրտաւ
 տամ առ և զընա. երկրորդն ասե
 թէ զամ ընդ քեզ առ արքայ.
 Բայց խօսիլ ոչ կարեմ առաջինն.
 Լ'սլ նա յուսահատեալ յեր
 կուց սիրելոյն. առ երրորդըն
 զընաց սրտիւ զառնագոյն. բայց
 ոչ կարեւր հայիլ յերեսս յամօ
 թոյն. զի սեր չունէր ընդ նա
 կատարելագոյն.
 Լ'սլ նա կոչեալ սիրով առ ինքն
 և խօսի. ասե մի երկընչիւր իմ
 քաջ սիրելի. ես քո փոխան խօ
 սիմ 'ի գուռն արքայի. ազատեմ
 'ի պարտուց քոց ամի.

Երբ ժամ լուսն զառակս որդի
 արքային . ազաչեաց ըզբարձամ
 մեկնել զայն նորին . և նա սկըսաւ
 ասել զայն յովասափին . և ունկըն
 գիբ լինէր յովասափ բանին .
 Լաց թէ սիրելի մարդոյն մին
 ինչքն են . և երկրորդ ազգա
 կանքն և բարեկամքն են . յոր
 ժամ ՚ի յոր մահու մարդքն հա
 սանէ . ոչ ազգն է օգնական՝ ոչ
 ինչքն փրկէ .

Իսկ թէ գործ ըս բարիս յշխարհ
 ունիցի . երրորդն այն սիրելին
 է զոր ասացի . լինի իւրն ապա
 ի են յատեանն յի . և ազատէ
 յանշէջ հրոյն գեհենի .

Լուսն զայն յովասափ յոյժ ու
 բախացաւ . և բուրբով սրտիւ
 յած յուսացաւ . ՚ի խօսսըն բար
 զամու փառաւ որեցաւ . զունայ
 նու թի կենցաղս իւրազ իմացու .

Վասկ մի այլ բարդամ ճգնւորն
ասէ . այր մի ունէր որդի սիրուն
ի սրտէ . կամեցաւ կինն առնուլ
ի մեծատանէ . այլ նա գնացեալ
յօտար երկիր հասանէ .

Լսուս անդ կոչս աղջիկ մի ալեռ
րի . ճարտար սք շանորատ ե ի
մաստիւք լի . ե կեալ իւր հօրն ա
սէ թէ այն ինձ պիտի . ե նա գնա
ցեալ ե առ զնա իւր զաւակի :

Հորժամ որ հարսանեաց աւուրք
ըն լըցան . կոչեաց ալեռն այն
ըզին սայն ի տան . ասաց աչացս
իմ լոյս որդի պատուին . խոհեմ
ե իմաստուն ե յոյժ սիրտկան :

Վրդ որ յաղքատութիւն իմ հա
ւանեցար . ե ի կուսան գարտիկն
իմ գու հաճեցար . զվարժամուի
հօր քոյ փութով մտացար . կա
միմ զքեզ խիլայել իմ սրտովս
յօժար .

Լիւ եւս նրմա զմբուխա ալ մի
պատուական . որ էր զբան լը
տեր չախով ծանրութե . վաճա
ռեաց և հասաւ նա փարթամու
թե . եօթընպատիկ քան զհայրն
ի հարբաութե :

Իսկ յովասափ անց թէ զայդ ինձ
մեկնէ . քանզի ուրախացայ ՚ի քոյ
ին բանէ . զի այն որ առաքեաց
զքեզ յանապատէ . նոյն ինքն ան
ձառ կենոք զքեզ փառաւորէ :
Մայ՝ երիտասարդ մանուկըն
գու ես . աղքատ ծեր ալեւորն՝
եւ որ պատմեմ քեզ . և դուստ
րըն գեղեցիկ՝ զոր ասացի քեզ .
այն վարքն է սրբութե՝ յոր հը
րաւ իրեմ զքեզ :

Իսկ աղըն մեծագին արքայութն
է ուր անպատում բարիք անդ ամ
բարեալ է . և այն որ ծանրութե
ըն զբան լիար է . զյաւիտենից

ըզկեանսըն նըշանակե :

Թե գու քարոզուես իմոյ լուի
ցես. և զճըշմարիան ան հոգւով
ճանաչես. ՚ի շար գործոց մաքուր
ըզքեզ սրահեցես. և զյեւսին
օր մահուն քոյ միշտ յիշեցես.
Յայնժամ ստանաս աստէն բա
զում մեծութի. քան զհայր քո
առաւել Թագաւորութի. յե
տոյ ժառանգեցես զանանց մե
ծութին. և հասանիս յերկնից
Թագաւորութին :

Ըւաւ զայն յովասափ և ուրա
խացաւ. հոգւով այլ և մարմնով
բերկրեալ ցնծացաւ. ՚ի անէ այ
նա յոյժ գոհացաւ. զի այնպիսի
բըժիշկ նըմա յայնեցաւ :

Ասաց նա բարդամու նք ճգնաւո
րին. և թէ որքան տարւոյ են ա
ւուրք քոյին. քառսուն և հինգ
ամաց եմ ասէ նըմին. զարմացաւ

ընդ բանին որդի արքային :
Ասաց թէ ձերացեալ՝ ալեք
սպիտակ ես : որ ութսուն տա
րեկան՝ այլ աւելի ես : արդ
քառսուն և հինգ տարւոյ անես
զքեզ : զի արդ այսու բանի՛ զես
հաւան անես :

Այց՝ ետժանասուն ՚ի ծննդերե
կմ. այլ զոր յն կացի՝ զայն ոչ հա
մարեմ. բայց քառասուն և հինգ
որ յանապատ եմ. իսկ որ յառաջ
քան զայն ոչ ինչ համարեմ :
Բանզի որ յաշխարհիս՝ մեզք
ցընորի . մեռեալ ե նա հոգւով
և չէ կենդանի . նր կեանքն ՚ի մար
դոյ համար չանկանի . այլ անբան
անասուն և մեզաց գերի :

Քառասուն և հինգ ամ յանապա
տի եմ . յընթերցմանե գրքոյ՝
ես գաղարեալ չեմ . ՚ի քաղց և ՚ի
ծարս՝ զմարմինս ճընչեալ եմ . և



Թողութի մեզաց յոյ հայցեմ.
 Եւ հարց յանապատին դուք ինչ
 կերակրիք. ասց՝ զայն որ ուտեն
 անբան վայրենիք. դալար խոս
 բանջարոյ է մեզ ուտելի. Եւ ի ցօ
 զոյ երկնից լինի ըմպելի.
 Մասց՝ ազանելի մարմնոյ ձեր
 զինչ է. ասաց թէ մաշկեղէն և
 մազեղէն է. յմաս Է՛ի ձըմեռըն
 մեր հանդերձ է. միայն որ զմեր
 կութի մարմնոյ ծածկեացէ.
 Կանգի որք կամիցին ան ծնել.
 պրտին զանդամ մարմնոյ՝ յերկրի
 սպանանել. բազում ազգի ազգի
 վշտաց համբերել. ապա վերինն
 երկրի ժառանգորդ լինել.
 Մասց թէ քո հանդերձըն մազե
 ղէն է. ապա զայդ որ զգեցեալ
 Ես այդ ուտաի է. ասց թէ զայս
 առել եմ յյս քողագի. զի զգալս
 իմ որ առ քեզ ոչ որ իմացէ.

Պատմություն



Բանդի յնապատեն յորժամ եւ
 ելայ. զայս մեծատան հանդերձա
 առի եւ ազայ. ապա ՚ի դռուն ե
 կել հրաման ընկարայ. եւ այս կեր
 պարանաւս յապարանս մըտայ.
 Լ'որս ասե առնա որդի արքային.
 Թէ հան զիս ՚ի բանտես այս իս
 չարային. եւ տար ՚ի յանապատ
 աղօթից քոյին. մի թէ աղատի
 ցիմ ՚ի հրոյ գեհենին.

Պատասխանեալ բարդամ որդւոյ
 արքային. զքեզ ոչ կըրեմ տանիլ
 ՚ի յանապատին. այլ դէր ականջ
 բանիս իմոյ առակին. կոմիմ տալ
 օրինակ գալտատեան քոյին.

Աստուծոյ Երեմիայի Գլուխ Գ

Արարող մի ըմբռնեալ եր ճագ
 մի եղին. բերեալ սովորեցոյց ՚ի
 մէջ մարդկային. յետոյ գնացել
 եհաս յերեոց միջին. ըզհետնը
 մըտին զայլան ըմբռնեցին.

Նոյնպէս թէ զքեզ տանիմ՝ քո
հայրն իմանայ . և թէ ընդ որ
երթամ զտեղին գիտենայ . զեղ
բարսն իմ զամ՝ սըրոյ իւր կեր
տայ . և զքեզ անդ ոչ թողուն՝
բերեն առ արքայ :

Եւ զինչ խրբատ տամ քեզ՝
դաճեա՛ ՚ի սրտի . և մըկըրտիք
յանուն որդւոյն միածնի . եւ
յանձն առնեմ ըզքեզ փրկչին
յի . նոյն ինքն առաջնորդէ քեզ
զինչ և կամի :

Եւ ակն ունիմ յամ հայրն ամե
նակալ . և ՚ի յամ որդին ՚ի հօրե
ծընեալ . որ զքեզ ուղեորէ փու
թով առիս գալ . և յայնժամ ՚ի
միմեանց այլ ոչ հեռանալ :

Յովսափ բարդամու զայս բան
հարցանէ . թէ սք հայր հոգևոր
զայս ինձ հրամայեա՛ . թէ մարդ
որ մկրտի՝ կրկին մեղանչէ . նա

զԹողու թի մեղաց ո՛րից գ ըստանէ :
Լայց թէ բարեբար արն ողոր
մած է . որ ՚ի մեղաւորաց ըզդարձ
ըն խնդրէ . քանզի որ առ ան
սրբաով գ իմեալ է . նա զառաջին
յանցանս նր ո՛չ յիշէ :

Արչափ որ գ ըլլի մարդ ըն թող
կանգնի . սրբան որ մեղանչէ՝ նա
խոստովանի . գ ըթած և մարդա
սէրն ան ընդունի . արքայու թէն
առնէ ըզնա արժանի :

Յաւե տարան ըն սբ՝ նա մեղ խոս
տանայ . թէ ո՛վ որ գայ առ իս՝ ան
տես չառնեմ զնա . քանզի առանց
մեղաց՝ յերկրի մարդ ո՛չ կայ . այլ
անդրձըն գ իւր նրման լինե՛նայ :
Քանզի և սայիաս մարդարէն ա
սէ . թէ զանօրէնու թի քո լեզ
ւաւ յայտնէ . յայնժամ արդա
բանաս շնորհօք ՚ի աննէ . և յայ
քեզ մեծ պարգև իջանէ :



Վա՛հ ի՛ծ ասէ պատմե՛մ ինձէն
 ըզմեզս իմ. դու զամբարըշտու
 թիւնս մեզաց թողուս զիմ.
 մարդարե՛իւն ասէ՛ ըզդարձըն
 կամիմ. այն որ յերկնից իջա՛ն
 բըժիշկ և հաբիմ:

Օ ի մեղաւորն յորժամ դառ
 նայ՝ ի մեղաց. խոստովանի՛ զբա
 զում չարիս յանցանաց. գըժած
 հայրն երկնաւոր մաքրե՛ ի մե
 ղաց. այն որ անառակի որդւոյն
 գէ՛մ գընաց:

Վանզի ողորմութի՛ւն անըստ
 է. որ ամ մարդոյ ըզդարձըն
 խընդրե՛. իսկ որ անզեզջ մընայ
 ինչ տպաշխարե՛. անշէջ հուր գե
 հենայն նըմա պատրաստ է:

Յովտասի բարդամու գարձեալ
 զայս ասէ. յորժամ կամիս գը
 նայ դու զիս մըկըրտե՛. և առ
 ոսկի իարժաթ՝ որչափ քեզ



պէտք է . և տօր 'ի յանապատն
ուր կրօնաւորքն է .

Յայնժամ յովասափու անց բարա
ղամ . թէ ոսկւոյ շարժաթոյ քոյ
ոչ ցանկանամ . և զի ես քան ըզ
քեզ այլ խիստ եմ փարթամ . ան
ցաւոր փնց քոց ոչ կարօտանամ .
Բանզի զայդ մեծուիդ որ դու
վայելես . վազիւն այլոց թողուս
'ի հող մըտանես . դու ոսկւոյ շար
ժաթոյ ծանց եղել ես . ոսկ զաղը
անպիտան զայն համարիմ ես .

Այն ես քան ըզքեզ այլ մե
ծատուն եմ . փառաց և մեծու
թե ես ցանկացող չեմ . յանանց
կեանքն անվախճան գանձ ժողո
վեալ եմ . յընչից մարմնականաց
զիս ազատեալ եմ .

Իւր թէպէտ յաշխարհի շրջիցիմք
ազքատ . այլ ակն ունիմք անանց
բարեացն յորդառատ . յուսով

Եւ հաւատով՝ սիրով անարատ .
 ծառայելք այլ ՚ի մեզաց ազատ .
 Ընկ թէ լընչիցդ ասեալ յանա
 պատ տանիմ. խոսովս թի՛ արկա
 նե մ մեջ ընկերոցն իմ. յայնժամ
 մեզաց պատճառ ես նց լինիմ. Եւ
 ազոթից նց խափանիչ լինիմ .
 Կանգի երկուց տերանց՝ մարդ
 ոչ ծառայել . զի թէ զմիւրն սի
 րէ միւն ատելի է . զի որ մասն
 նայի ծառայ եղեալ է . նա յոյ
 սիրոյն զմեզն զգեալ է .
 Ընկ գու թէ կամենաս ըզգեզ
 մկերակամ. ՚ի յառաջին մեզաց կը
 ուցն ազատամ. որդի հօր այ՝
 շնորհօք զարդարեմ. ժառանգա
 կից բանին այ առնեմ .
 Թի զհրահմեն յառաքին : Եւ
 Յայնժամ հրատարեցոյց ՚ի սա
 տանայել . զերրորդու թի՛րն սբ՝
 դաւանելատե . ՚ի մահըն քի ըզ

ԺԻ 192 Նա



նա մկրտե . շնորհք հոգւոյն
սրբոյ ՚ի նա իջանէ .

Հաղորդեցոյց ըզնա մարմնոյ կեն
սատուին . ուսոյց պահել նրմա
զբան պատուիրանին . աոց ըզգու
շանալ կամաց արարչին . և ինքն
ելեալ զընաց ՚ի տեղ առանձին .
Իսկ մի ՚ի ծառայից սրբւոյ ար
քային . որ զարդ անուն նր վե
րակոչեին . իմացաւ ըզգալուստ
անա բարզամին . և զքրիստո
նեայ լինելուն յովասափին .

Եկեալ առ յովասափ զարդն այն
և տսե . Թե վս քո գործոյդ՝ ահ
զիս պատել է . ընր այն ծերու
նին առ քեզ մտանէ . գիտեմ
որ քրիստոնէյ զքեզ արարել է .
Բա հայրն ՚ի յայտմ երկրե զնս
հղածէց . զքրիստոնէից անունն
յսէ ջնջեաց . և զքեզ վս այնո
րիկ ՚ի տուն արգելեաց . զի մի՛



Ընդհանրապես ըզբան նոցին օրինաց,
 Եթէ զխորհուրդքս զայս հայր
 քո իմանայ, որ մուտ եւել ունի
 առ քեզ բրիտանեաց, ժուժով
 զաման զմեզ սպանանել տայ, որք
 ոչ ըզգործքս քո յայանեցաք նրո
 Պատասխանեալ նրմա որդի ար
 քային, եթէ յորժամ գայցէ ա
 ռիս ծերունին, դու ծածկատեա
 կացցես դեմ վարագուրին, ուն
 կընդիր ելլես ըղխորատ նորին
 Առդին եկեալ առնա սբ ճրդ
 նա՛ որին, յայնժամ խօսի ընդ նա
 որդի արքային, առե՛ սբ հայր կա
 րօտ եմ բանից քոյին, դարձեալ
 զիս խրբատեա՛ կամօք արարչին,
 Հովասափաւ բարզամ զայս դար
 ձեալ առե, թէ զոր քեզ ուսու
 ճի՛ դու ՚ի միտ պահե, յաղտե դու
 թեց մեզայ զհոգիդ որոշե, ՚ի
 սեղըն քի ըզգեղ բեւոտ,
 194

Լ՛գամ



Լ՛գամ որ ոչ պահեաց զպատէւր
 արարչին . մերկացի՛ ՚ի լուսոյն ճա
 շակմամբ պրտոլին . մինչ բանն ան
 մրմնով աղատեց զնոսին . զպոս
 ընդ եայի ե զճնունդ ըս նոցին .
 Եւ այլ բազում բանի՛ խրատ
 տեաց ըզնա . ե զարդն ունկրն
 գ ընէր բանից ըն նր . իմացա՛ ըզ
 ճշմարիտ հաւատալ նր . բայց ոչ
 ետ հաւատալ նրմա սատանայ .
 Լ՛պա ե կել ասե որդոյ արքային .
 զարդն այն որ ծառայէր նա յո
 վասափին . զայս ոչ կարեմ ծած
 կել ՚ի հօրե քոյին . զոր դու հա
 լանեցեր խաբեբայ ծերին .
 Օրվասափ ծուային պատասխանի
 տայ . թէ ճշմարիտ ե զեալ եմ ետ
 քրիստոնեայ . ե թէ հայրն իմ
 արքայ զիս սպանանել տայ . իմ
 սիրտս ՚ի քե՛ այլ ոչ հեռանայ .
 Ա՛յ այն ըզքեզ բերի որ դու լը

սէիր. մի թէ բարի խրատուն այն
հաւանեիր. և դու ոչ ընկալար
զըստն առատաձիր. ոգիդ մնաց
խաւարեալ՝ ունայն և նանիր :

Եւ զնուրի խորհուրդս յանդամ : Զի
կեալ առ յովատափ ճգնաւոյ
ըն ընտրեալ. սակ թէ քի ես
դու զինուորեալ. զհաւատս յա
ւազանէն որ քեզ աւանդեալ.
որդեակ իմ ըստ հոգւոյ՝ պինտ
հաստատուն կալ :

Եւ յնձն առնեմ ըզքեզ որդոյն
միածնի. այնմ որ նախախնամիչ և
նախախնամի. խաղաղութիւն կացիր՝ ի քոյդ
պալատի. զընամ ես առ ընկերսն
իմ յանապատի :

Եւ յովատափ բարզամու զոյս դար
ձեւ սակ. ի քեն խնդիրք ունիմ
դու ինձ կատարե. զկրօնացդ և
զմազեղէնդ հայր ինձ պարգևե.
որ առիս յիշակ ի քեն մընացե :

Եւ ի հան ըզմազեղէնն և զկրկնացն
 յանձնէն. առեալ զայն յովասափ
 ՚ի Ճգնաւորէն. և զգեցաւ ՚ի մար
 մնի՛ գեմ բանաարկու՛ին զէն. ույ
 զմաչկեակընն նբ ՚ի յեղիայէն .
 Լը՛ լալով ըզմեանըս համբուրե
 ցին. ելեալ բարզամ գնաց յիւր
 անապատին . հանապազ աղօթէր
 վն յովասափին. մի թէ ազատեա
 ցի յախտից մարմնային .

ԹՎԷ ԳՅԻՆԷ ԸՅ ՂՐԴ ԾԱՌԱՅԻՆ ՆԳԻՒՄ
 ԻՆՅ ԸԻՆԸ ԵՎՆՆՒՄ . ԺԳ

Եւ ի յովասափ ՚ի տան իւրում
 աղօթէր . և զարդ ծառայն յա
 հէն հիւանդ անկանէր . Է հարց
 զնա թագաւորն և ասել չկա
 րէր . յետոյ ՚ի յերկիւղէն ըզ
 ճշմարիտն ասէր .

Եւ զաց թէ իմացիր նբ իմ և ար
 քայ . որ յովասափ մանուկն եղև
 քրիստոնէսյ . քանզի յանապա

տէն ծերմ եկեալ առնաւ քարո
 զելով նրմա մուրեցոյց զնա :
 () Եայնժամ լըւաւ արքայն և յոյժ
 տրամեցաւ . սոյ ըզկատաղի շար
 քաղան դարձաւ . կոչեաց ըզ
 մեծամեծս ՚ի նս հարցաւ . Թե
 զինչ առնէ մանկանն որ զկու
 սըն ուրացաւ :

Իսկ ոմն որ առչիս անուն կոչեին
 որ էր աստեղաբաշխ և բինից կա
 մարին . և տես յոյժ գառնացել
 զերեսս արքային . ասաց Թե մի
 տրամիր վս յովասափին :

Ըրդ զմուրեցուցիչ ծերն և ս
 ըմբռնեմ . և ՚ի յատեան մահու
 զնա կացուցանեմ . շարչար տանջա
 նօք զնա վիրաւորեմ . զյովասափ
 ՚ի նմանէ փութով բաժանեմ :

() Ճանապարհ քաղաքին զայն ըմ
 բռնեցին . բազում զօրօք ելել
 զբարզամ խնդրեցին . գնացել ՚ի



յանապատ զնա որոնե ին . յոլով
 աշխատեցան զբարդամ ոչ գտին .
 Եւսկ ՚ի կրօնաւորացն որք յանա
 պատին . բազումք յաչե նոցին
 ըզփոխուատ առին . զտասն և ութ
 ըմբռնեալ և ՚ի հետ բերին . ուն
 զանմեղ գառինա նահատակեցին

ԹՎ Նասովբոյ իտորիւն . (25)

Եւսկ կայր ՚ի քաղաքին նաքովը ա
 նուէն մի . եր շար և խաբե բայ կա
 խարդուծք լի . և կեալ անդ առա
 շիւ և լը նա խորհի . խաբել ըզ
 յովասափ մանուկըն բարի .

Եւլեալ գնաց ծածուկ ՚ի յանապա
 տին . նաքովը անուէն կախարդ կա
 մարար շարին . կերպարանեալ կա
 մաւ յանուէն բարդամին . բանիւ
 առաշխին և թագաւորին .

Գնացեալ յետոյ զորոք ըզնա
 ըմբռնեն . բերեալ ՚ի քաղաքին
 ՚ի բանտ արգելեն . կամաւ հրա



դարակին յայտնի համբաւեն .
Թէ զձերունին բարզամ առեալ
բերեալ են :

Գրնաց առ յովասափ արքայն
արեւնէր . ասաց թէ այս զի՛նչ
է զոր դու գործեցեր . ՚ի յաս
տուծոց մերոց զմեզ բաժանե
ցեր . զքրիստոնէից ազանդ կա
մաւ յանձդ առեր :

Ղօխատինս արարեր զմեզ ազգի
մարդկան . և կուգրն հաւասար՝
մեզ յոյժ բարկանն . խռովին զի
բաւորին՝ փախչին և գընան . այլ
նրան լինի երկրիս պահապան .
| աւեր չէիր ծընեալ յերկրի
մեզ զաւակ . զի ծնար և արարեր
ըզմեզ խայտառակ . առելի շաստ
ւածոցն եղեր և ներհակ . և օրի
նաց մերոց յայտնի հակառակ .
| Երգ ես ըզվարդապետըն քո կա
պեալ եմ . ՚ի բանտ և ՚ի զընտան

զնա արգելեալ եմ. վաղիւն ՚ի
 յատենի զնա կացուցանեմ. զհա
 բեռ թի նր քեզ ծանուցանեմ.
 Յովասափ պատասխան առնէ ար
 քային. ասէ մի բարկանար հայր
 իմ զայրոց ին. քանզի կամաւ թո
 զի զհաւարըն ներքին. և ըզդե
 ցայ ըզլոյս փառացըն վերին.
 Քանզի զկուռան որ պաշտէք՝ շին
 լածք են ձեռին. և արարածք
 ճարգ կան՝ ամ սնց լինին. այլ նա
 որ ըստեղծեց զերկիր և զերկին
 ամ է համայնից՝ երբեւից և մինս
 Վարդ ես ՚ի հայր ամ հաւատա
 ցեալ եմ. որդւոյ և սբ հոգւոյն
 երկրորդադեալ եմ. ՚ի բանն ամ
 յս՝ ես յուսացել եմ. որ և զքեզ
 քրիստոսնեայ՝ յետոյ առնիցեմ.
 Իսկ արեներ արքայն բարկու թբ
 լըցեալ. ելեալ յոյժ գառնու
 թբ և ՚ի տուն զնացեալ. այլ




յովասափ մանուկն ՚ի արամու թե
լեալ. գիտաց թէ վարդապետն
իւր եր ըր ընեալ:

ԹՎԷ ԵՅՆԻԷՆ ԿԻՆՆՈՒՆԻՆ ԵՐՈՂ ԳԻ
ԻՐԵՅ ԵՂՆԱՓՈՒՄ ԶԻՆԳՈՒԹԻՆ ԵՆՈՒՂ
ԵՅ ԻՆԻՍՏԻՆ: (ԶԵ)

Վիշերն ՚ի յերազի՛ հրեշտակըն
յայտնէ. որդւոյ թ՛ղւարին զայս
Ժանուցանէ. թէ այն որ ՚ի բան
տին՝ բարազամ ոչ է. այլ կախար
դըն է նաքովը՝ որ ի արեբայն է:

Վարդին ըզքէ զկամին կոչել
յատենի. նաքովը ՚ի բարազամ
կերպրան լինի. բեբեն զխնասա
սերան ՚ի յայն հանդիսի. և զքէ զ
կամին ի արեբ ձեռամբ նաքովրի:

Վարժեալ ՚ի յերազոյն մանուկ
ըն բարի. և գոհացալ զանէ որդ
ւոյն միածնի. որ յայտնեաց ըզ
գաղանիս ձեռամբ հրեշտակի. զի
որդի արքային ոչ մուտրեացի:



Թաղու որն արենէր ժողով արա
 բեալ : զաստեղագէտս ամէն 'ի մի
 հաւաքեալ նաքովը 'ի բարդամա
 կերպըն փոխարկեալ : բերին զնա
 յատենի և հարցափորձեալ :

Մանուկըն յովասափ անդէն ժա
 մանէ . տեսել անդ ըզկախարդն'
 իսկոյն ճանաչէ . բայց ոչ ասաց
 նց վարդ ապեան իմ չէ . մինչև
 բանիւ նք ըզնա որասացէ :

Փիլ' սոփայիցն ասաց արենէր
 արքայն . եթէ կարէք յազթել
 զարեւոր ծերն այն , ապաք
 յինէն պարզ ևս և զգանձ պատ
 ճահան . ապա թէ ոչ՝ եհաս ձեր
 օրըն մահուան :

Իսկ յովասափ ասաց սուս բարս
 զամին . թէ դու ինձ ուսուցեր
 զորէնս քսին . ցուցեր զիս ասե
 լի իմ հօրն արքային . որոշեցեր
 'ի կուսց խրատով քո բանին :

Լ՝րդ էթէ Ճշմարիտ է զոր ասա
 ցեր. այսօր փիլիսոփայիցըս դու
 յաղթեցեր. նա ՚ի հօրէս իմմէ
 կասկած մի կըրեր. յայտնի օրի
 նաց քոց՝ դու քարոզող լեր.
 Լ՛ի թէ խաբէութի դու զիս պատ
 րեցեր. և սուտ և անիրու՛ օրէնս
 ուսուցեր. նա քո կենդանուէդ
 վըճար դու եղեր. ՚ի քո մըտեդ
 կըտրեմ և տամ քեզ ՚ի կեր.
 Լ՛նդով անդով զմարմինըդ քո կո
 տորեմ. և շանց և գողանաց զքեզ
 արկանեմ. ամէն մարդոյ խըրատ
 ըզքեզ ցուցնեմ. այսօր զսուտն
 և զիրաւ՛ըն քո ես յայտնեմ.
 Յայնժամ որ նախ գիւաց նա
 բընակարան էր. շնորհացն ան
 այնոյ ընդունակ լիներ. որդւոյ
 թագու՛որի յերկիւղէն սարսեր.
 և սուտըն բարազամ զճշմարիտն
 ասեր.



Եւ զի տրտնելոյ սուս բորւղովն որ էր
 նստել շինն ճշմարտին Յի: շր շոգին
 Եւ յայնտեց յի ինքնորովն: 26

Եւ սաց ոմըն նրմա՝ Թէ դու բար
 զամ ես: որ սուտ ե խաբեբայ զ
 րենս քարոզես: անց ճշմարտութ
 վարդապետ եմ ես: որ որդւոյ
 արքայի օրենս ցուցի ես:

Եւ յայնժամ լցել շնորհօք որդւոյն
 միածնի: կիսարդն զոր օրինաց հա
 կառակ բերին: ուր յայնժամ բա
 զամ դէմ խորայի լին: անէ ծքն ՚ի
 յօրհնու Թի փոխարկեալ լինին:
 Սուտեալ ընդ արքային բանիւ
 ե ստե այն որ ծածուկ նաքովը՝
 յայտնի բարզամ է: Թէ կուսքն
 զոր պաշտեք այն ձեզ վընաս է:
 զի բնակարան դիւաց պատկեր
 կանգնեալ է:

Ամանք որք զուսու՛ որս անսա
 սացին: նոքա մոլորեցան ե ոչ գի



առաջին. զի փոփոխին ան զեւել և
նչ գաղարին. հրամանաւ անփո
փոխ կամօք արարչին:

Իսկ որք չորս տարե բացս ամս ան
էնեն. նորա յիմարեցեալ մուր
մրաօք են. զի որք միմեանց ներ
հակ և հակառակք են. նորա ամ
ուրէ անունն ոչ կրբեն:

Օ Եղիպտացւոց ամսն և զբարի
լոնին. զհէլլենացւոցն և զորս ՚ի
կարգի նոցին. որք մարդոյ կեր
պարան շինեալ պաշտեցին. և որք
իդականի ամս առաջին:

Թուղումք ասել և զայլսն որք ջեն
սիշելոյ. զգազանս և զանասունս
յօդոյ և ՚ի ջրոյ. զաբիս զմուկն
և զխտու և զայլսն ՚ի գեւնոյ:
ըզձառ ըզտունկ և զբոյս՝ զսփս
ընդ սխտարոյ:

Մարդ այս և զոր երկրի ամս առ
ջին. և զճշմարիտն ամս մտաւցել

Թողին . զարարածս՝ արարչին փոխան պաշտեցին . զարչելեաց ի ամօթոյ երկըրպագեցին .

Եւ որ ամենայնի անն է՝ մի է . անձամբ է երբակի՝ անու՛ամբ է . բեք է . բնութք ի իշխանութք զօրութք մի է . կեանք և կենդանարար և նորոգօղ է .

Հայր է ծնող բանին՝ հոգին բրդխումն է . անեղ անժամանակ և անսահման է . անտես անբըննելի և անզննին է . անչափ և անքանակ՝ աննըմանակ է .

Եւ նորիտելի է հայր՝ որդին զնորիտե . զիտե որդին ըզհայր՝ հոգին քննիչ է . ստեղծօղ կեցող ցանօղ պարգևատու է . զթած և մարդասեր նախախնամօղ է .

Կամեցօղ է բարեաց՝ կամակատարել ըյս է միշտ համաափիւս և լուսատու է . աղբիւր յորդախաղաց

արբուցանող է . և գետ լայնատա
րած ծով խորագ ոյն է :

Եր միշտ յաւիտեանից՝ է և եղի
ցի . եիցս է անպարփակ շանիմա
նալի . եացուցիչ գոյիցս և բինի
և երկրի . իմանալեաց զգալեաց՝
ծովու ցամաքի :

Վիտառի պ անորակ և կերպ անձե
է . եւթի անըսկիղուն և գոյ ա
նեղք է . իսկութի է յաւեւ
կեանք անլախճան է . անուր՝ ա
ներք անբաւ՝ անհաս էակ է :

Որնուհոգ է ՚ի ծոց հօր անբաժա
նելի . բղետւմնն սբ հոգւոյն ան
բապաւելի . են հարթ և հւասար
անձինքն երբակի . ոչ մեծ ընդ
կրրտսերի՝ կամ նախ և վերջի :

Եւ եր որդի ը հօր նախ քան
զյաւիտեան . որ և բոլոր է ակքս
նովաւ արարան . հոգին արարչս
կից որդւոյ հօր նրման . յաւիտե

նից յաւելտ մշտնջենական :

Իսկ մինն յերկց անձանց՝ յերկիր խոնարհեալ . ՚ի հայրական ծոցոյ նա ոչ բաժանեալ . ծնեալ ՚ի կոյս մօրէ ան մարդացեալ . որ նախ քան զյաւիտեանս ան մայր էր ծընեալ :

Մարմնով յերկրի շրջեալ երեսուն տարի . եկեալ ՚ի յորդանան կամաւ մկրտի . ՚ի հօրէ վրկայեալ հոգին իջանի . ապա հրաշիւք յայտնեալ ՚ի մեջ աշխարհի :

Նորեաց իւր աշակերտս երկուսասան թիւ . նորք որսաց զմարդիկ կենացն քանիւ . զոր նախանձեալ ընդ նա շարին խոր հրդիւ . ՚ի խաչ բեւոեցին թիւրեալքն սրտիւ :

Լքաւ ՚ի գերեզման կամաւ որս կան . յարեւ ՚ի մեռելոց անձն ան վախճան . ելեալ մարմնով յերկիր

Եւ յնրս յաթոռ հայրական. առաքելց
 զնք հոգին՝ դատուն մետասան .
 Իսկ առաքեալքն նք՝ յերկիր ըս
 փըռեցան. և մուրրելքն ՚ի կուռս
 առ անժ դարձան. շարագործոց պա
 հեալ է հուրն անվախձան. բարե
 գործաց հանգիստն յւ՛խտենկն .
 Լ՛ըդ ճշմարիտ անժ՝ յս քս է .
 այն որ ար կենդանեաց և մեռե
 լոց է . իսկ որ արարածոց երկիր
 պագանէ . նրմա անլոյս խաւարըն
 պատրաստեալ է :

Թ-նիւ լիկի լի լի լի սոփոյն . և նուսլը
 ելիւ լի սոփոյն . և լի սոփոյն յան
 դոսն՝ լիկի կրօնաւոր . ԴԸ

Յորժամ նաքովը ասաց զայս հա
 ւատոյ բան . փիլիսոփայքն ամենք
 զամօթի հարան . այլ ոչ կարացին
 տալ նրմա պնտխան . առեալ զնա
 քովը տարաւ յովասափ ՚ի տան .
 Ի՛նչ իրս կախարդուէ իւր նաքովը

այրեալ . գնացեալ ՚ի յանապատ
և անդ մկրտեալ . յուսով և հւն
տով ՚ի օր հաստատեալ . և մինչ ՚ի
յօր մահուն անդ կրօնաւորեալ .
Գարձել ՚ի տրամութե արեւեր
լինէր . և միշտ և հանապաղ ՚ի դառ
նուէ էր . քանզի որ ՚ի կախարդն
ապաւինել էր . ետես զնա քրիս
տոնեայ՝ որդւոյն իւր ընկեր .
Յայնժամ իմաստին զիշխանօրն
կոչէ . և դառնացեալ սրտիւ իւր
բառ հարցանէ . թէ զի՞նչ ճարակ
որդւոյն իւրոյ գըտանէ . որ ՚ի
կապաշտութի ըզնա արկանէ .
Աստորդ մի այլ ցուցին՝ անուերն
թեգաս . որ ՚ի սատանայէ առել
էր շատ դաս . և էր զիւնց զնդին
մեծ ծառայ և խաս . և զմարմինն
արարեալ էր նոյ դարպաս .
Ար միշտ և հանապաղ ՚ի յանապատ
կայր . և զիւնացըն դասուց և զել

Եր դադար. նա մերկ և գլխիբաց
և բոկ սասմբ կայր. և անդադար
Ի չար ըզմարդիկ որայր :

Յուղարկէ և կոչէ Թագաւորն
ըզնա. զբոլոր քաղաքն առեալ
դեմ նր երթայ. փառօք մեծարա
նօք առեալ և դառնայ. Թերևս
յախասափու ճարակ գտցէ նա.
Ընց Թեգաս Թէ Ես հընար զը
տանեմ. և զյախասափ Ի կուռօրն
դարձուցանեմ. յաղանդոյն բար
ըամու ըզնա որոչեմ. և զկամս
Թագաւորիդ փութով կատարեմ.

Ըրդ հան նախ ըզմանկուան
Ի տանէ նր. և փոխանակ ման
կանց՝ տար աղջկունս առնա. և
Ես ըզցանկութե՛ն դեւ յըզեմ
Ի նա. որ յախտ պոռնըկութե՛ն
չարժեացէ ըզնա :

Յայնժամ անն յս յոր հւատաց
նա. բարկութիւն զայրանայ Ի դոր

Եւ յապարհս քանզի ե մեղաստերն
 ատելի նր. և յովասափ անդրէն
 ՚ի կուռսրն դառնայ :
 Հրաման եւ թմբն՝ զմանկունսրն
 հանին. և կոյս աղջկունս առնա
 բերել կացուցին. իսկ յովասափ
 լցեալ շնորհքն յսին. ոչ ինչ
 կարաց յաղթել ըզնա թշամին :
 Վանզի աղթելով զանձ աղաչէր.
 ըզդեն պոռնրկութե իբաց հալա
 ծէր. քան զգեղեցիկն յովսեփ
 նա աղջխսնէր. ուր ՚ի մայր և
 քոյր յաղջկունսրն հայէր :
 Եւ յայնժամ թեղաս կիսարդն առ
 յովասափ դայ. և չարաչար բանիւ
 խորատե ըզնա. իսկ նա ատե չար
 ծէր զբերանդ քո կարկեւն. սաս
 ան ՚ի քեզ յս՝ անն իմ արքայ :
 Ի սկսաւ նրն յովասափ ըզնա խը
 րատել. զօրենս անային՝ թեղա
 սայ պատմել. ՚ի յազամայ հեւե
 նրնա

նրմա քարոզել. զանօրէնութի
 բանին ւն ճառել.
 Հոգւոյն ւրջ շնորհքն ՚ի նա ծա
 գեցաւ. զմուտութի դիւաց փու
 թով ուրացաւ. քարոզութե նր
 յոյժ հաւանեցիւ. և գայլըն նոյն
 ժամայն գառն երևեցաւ.
 Գնացեալ առ թփէրն՝ ասաց թե
 արքայ. յորդին քո ճշմարիտ շնոր
 հաց հոգի կայ. արդ ես բանիւ
 նր եղե քրիստոնեայ. ըզկուսան
 և ըզդիւաց գունդըն մտացայ.
 Օ կախարդութե գրեանս գա
 մենն սցրեաց նա. գընաց մկրթ
 տեցաւ նրման նաքովայ. եղև
 ւր ճգնաւոր՝ ընտիր քրիստա
 նեայ. յի քի ւն ծառայ.

ԹՎԷ Բ-Ժ-ՆԵԼՅ - ԲԻՆԵՐ - Բ-Գ-ՄՆՈՐԻՆ
 ՆԵՐՆԻՆ Ի-Ր ԸՆԴ յ-Լ-Մ-Գ-Մ-ՈՐԴ-Յ Ի-Ր
 Լ-Ն-Ր - Մ-Ր-Ի-Ն-Ը շՆԻՆ ԵՐԻՄԱՆԵՅ. ԶԻ

| Սկ աբենեթ չգիտեր թե ինչ

առնիցեր . զի զորդին ՚ի կամաց
իւր հնել ջկարեր . վարել յօտար
սիրտըն ջհանդուրժեր . ըսպա
հանել ըզնա անհընարին էր .
Լ'պա մեծամեծօք խորհուրդ
արարեալ . զերկիրն իւր զամ
յերկուս բաժանեալ . ըզմի մա
սըն իւր որդոյն կամաւն իւր
տըւեալ . և յովասափ զնացեալ
անդ թագաւորեալ :

Կըտեալ է պիսկոպոս մինա փա
խուցել . որ յահէ հօրն իւրոյ էր
նա թագուցլ . բերեալ զնա յովա
սափ առաջնորդ կարգեալ . քաղա
քին և երկրին հովիւ կացուցել .
Լ'կեղեցիս բազումս անդէն շինե
ցին . ըզկուռան և ըզմեհեանսըն
կործանեցին . ժամատեղաց սահ
մանս և կանոնս եղին . զօրենս
քրիստոնէից անդ հաստատեցին .
() Երաստօրէ զբազումս անդ մկր

Եւ զառնային ՚ի ար պայ
 ծառ հաւատով. զառաջին պղծու
 թիսըն մերկնեւ լով. Եւ նոր բարբա
 ր վարուց յանձին բերելով.
 Եւ մենայնի պարգևս յովասափ շը
 նորհեր. հանդերձրս պատուա
 կանս նա ագուցաներ. զամսեան
 ՚ինոյն հաւատս յորդորեր. ոսկի
 արծաթ և այլ ինչքս պարգևեր.
 Բազարական օրէնս և սահմանս
 եղեալ. ըզգողս և զաւազակս
 յերկրէն ՚իսխուցեալ. շնացողս
 և զմարդասպանս յաշխարհէն
 զատեալ. խրատով սբ օրինաց
 զնս պարբապեալ.
 Եւ յամենայն տեղիս խաչըն կանգ
 նեցաւ. անունըն քի փառաւորե
 ցաւ. կարողութի դիւացըն կօր
 ծանեցաւ. և յոյսըն հաւատոյ
 անդ հաստատեցաւ.
 Եւ զովասափաւ ձայնըն լուս
 րն.

Երբ որ արքայն արեւնէր աչօք տեսա
 ներ. ՚ի յօտար աշխարհէ առնա ՚ի
 Երթային. ՚ի տեսաւ թի նր աւրա
 խանային. յիմաստութի շնորհաց
 ըն զարմանային.

Իսկ արքայն արեւնէր աչօք տեսա
 ներ. որ ժողովուրդ Երկրին իւ
 րոյ պահասեր. և փառք իշխանու
 թի որդւոյն յաւելեր. և բազ
 մութի զօրաց առնա ժողովեր.
 Նայն ժամ ծագեց ՚ինա շնորհքն
 Երկնային. փարատեաց ըզխաւար
 մտաց և սրտին. իմացի զի կուռքն
 այնք ընդունայնք էին. և հաւա
 տաց փառաց որդւոյ միածնին.

ԹԳԻԷ Բ--ՂԲ -ԲԵՆԷՐ -- ԵՐ--ՈՅԻ Ե-Լ-
 --Ի՝ ԵՆՈ ՔՆՈՅ --ՆՈ. Ի

Նարեւնէր արքայե ողջոյն իմ որ
 դւոյն. սիրասընուանդ զաւակի իմ
 հոգւոյս հոգւոյն. կարօտ եմ և
 փափագ տեսոյդ քաղցրագոյն.
 յովասափ թագաւոր ծնյ բարձ
 րելոյն.

Ամացայ ճշմարիտ ՚ի բոլոր սրտէ .
 յոր դու հաւատացեր՝ ըստոյգ
 ան է . և կուսքըն մեր ոչ ինչ՝
 դատարկ իռնայն է . և պաշտօ
 նեայք նց մըտօք խաւար է :
 Լ՛րդ զառաջին շարիան որ էս գոր
 ծեցի . և զքրիստոնէյս բազումս
 որ շարշարեցի . հոգիս իմ զարհու
 ըրի յահէն քի . վախեմ թէ զան
 պիտանս այլ ոչ ընդունի :
 Լ՛րդ թէ գիտես որ նա ինչ կա
 մեցող է . և զառաջին խաւար
 գործան իմ ոչ յիշէ . յայնժամ
 յօժար կմտք սիրտս իմ փոխագի .
 և զյս ճշմարիտ անդ աւանի :
 Արտա եմ և ցանկամ ըզքեզ տե
 սանել . զորդիդ իմ զանդրանիկ
 գրկով համբուրել . զօրէնս քրիս
 տոնէից ՚ի քէն ուսանել . և զճրշ
 մարիտ անըն քո ճանաչել :
 Լ՛աւալ զթուղթն և տարան յո

վաստի արէին. կրդաց և վաստ
 ետ՝ անմահ արքային. որ հմապազ
 կամի զդարձ մեղաւորին. և ժա
 աանգորդ առնէ վնջըն վերին.
 Լըլեալ ուրախութեամբ առ հայրըն գը
 նաց. գորովագութ սիրով զար
 քայն ողջունեաց. լըլեալ ուրախու
 թք՝ ի հոգւոյն շնորհաց. և յովա
 ստի ըսկսաւ խօսել յօրինաց.
 Իսկ արեւներ արքայն՝ բարձրա
 ձայն գոչէ. Թէ ճշմարիտ անձ
 քրիստոսն էիցն է. յս քս փրկիչ
 ծընեալն ի հուսէ. և բերպագեմ
 նրմա ի բար սրտէ.
 Բաղարքըն հաւատար՝ ըզնոյն ա
 սացին. քի այ ծունրը կրկնեցին.
 զերրորդութիւնըն սք խոստո
 վանեցին. ըզիւս և ըզմեհեան
 սըն կործանեցին.
 Իսկ յովաստի ըզհայրն իւրեա
 մըկըտեւ. և ինքըն կնքահայր
 հօրն

Հօրն իւր անուանեալ. քանզի ե
պիսկոպոս հեա իւր եր բերեալ.
Ե զամսեանն տայր նր մկրտել.
Սըկրտեցան բոլոր քաղաքն ամ.
սպիտակադգեաւ եղեալ և նորո
գեցան. ՚ի բարութի ան սիրով
փութացան. և զառաջին շարխան
իւրեանց մտացան:

Վաբենէր արքայն զյովասափ
կոչեաց. զերկիրն իւր զամ ՚ի յոր
գին յանձնեաց. ամիս մի առան
ձին նա ապաշխարեաց. պահօք և
աղօթիւք՝ արտասուօք ելաց:

Վ՝ Ինհան քեկերայ ուրայ ի թա
րուրեւոյ ուրայ ի թա յաւանութի:
(հա)

Վրենէրց մահու օրն հասաներ
կոչեալ ըզյովասափ և անգարձ
աաներ. զառաջին շարութի գոր
ծոցն իւր յիշեր. և ՚ի դատաս
տանի անուրըն սարսեր:

Եւ յովասափ որդին մըխիթա
 բեր զնա. առե մի երկընչիւր հայր
 իմ և արքայ. զի սլ ոք որ կամաւ
 առ անդ գաանայ. զանցեալ գոր
 ծ ըս մեզաց անտես առնէ նա.
 Քանզի հայր բարեգութ և ողոր
 մած է. ստեղծող նախախնամիչ
 և մարդասեր է. մեզանորց գոր
 ձի միշտ կամեցող է. անսխակալ
 է նա ինն յիշաչար է.
 Յաւե տարանն իւր սբ՝ քս զայս
 առե. թէ մի մարդ մեզանոր որ
 ապաշխարե. հրեշտակաց ՚ի յեր
 կինս ուրախութի է. զի պատկեր
 այ երկնանորի է.
 Քանզի զմաքսանորին ըզմեզսն
 ջնջեաց. զպոռնիկն արգարացոյց
 և ոչ անարգեաց. քնանուհոյն լը
 ինն զզուսարն բժշկեց. աւուրա
 կին ըզդուսն գրախտին եբաց.
 Ըրդ մի յուսահատիւր հայր իմ

ԹՊԷՐ . այլ երթ առ արարիչն
 քո երկնաւոր . և նա անտես չա
 նէ յատեանն ահաւոր . այլ պըսա
 կաց առնէ զքեզ արժանաւոր .
 Յայնժամ հաղորդեցաւ մարմնոյ
 կենսատուին . և աւանդեաց ըզ
 հոգին ՚ի ձեռն արարչին . Ժողո
 վեալ ՚ի վր և կոծ արարին . ա
 ուալ մեծաւ պատուով տա
 թեալ Թաղեցին .
 Իսկ յովասափ արքայն անդ էն դա
 դարեալ . և եօթն օր ՚ի վր տապա
 նին կացեալ . ՚ի տիւ և ՚ի գիշեր
 աղօթս արարեալ . արտասուօք
 զպաղատանս առ իմր մատուցել .
 Պատարագս մատուցին զաւուրս
 քառասուն . բազում բաշխս ա
 րարին արքայի հոգւոյն . աղքա
 տաց կերակուր և հանդերձս
 ետուն . զճառայան աղատեցին
 կամօքն այն .

ԹՎԻ ԲՆԱԼՆԻ ԵՎ ԳՆԱԼՆԻ ՆԻՄՈՒՅՆ
 ԲԻՆ ԻԾՆԱԼՆԻ ԻՐ ԲՈՐՈՒՆՈՅԻ Լ
 ԻՆՆԻ ԳԻՆՅԻՆՆԻ ԵՎ ԳՆԱԼՆԻ
 (ԲԲ)

Նսկ յովասաւի արքայն խորհուրդ
 արարել զիշխանս և զմեծամեծս
 ՚ի մի ժողովեալ թաղումքանս
 օրինաց նոյ ասացեալ և զփառս
 այսմ ՚իս կամաւ անարգեալ և
 Ղաց թէ արեւնէր հայրն իմ փո
 ինչի և փառք և մեծութիւն իւր
 ոչնչացաւ զեզեցկութի պատ
 շոյն իւր ՚ի հող դարձաւ անհը
 իշխանութիւն ՚ի միջոյ բարձաւ և
Սաղիւն այն օրինակ ինձ կամի
 լինիլ և այս փառքս և պատիւս
 յինն խաբանիլ արդես կամաւ
 իմով պարտիմ զայս ձրդել և ՚ի
 բարաքիաս ծռայն իմ յանձնել և
 Վոչեաց զբարաքիաս առ ինքն և
 ասէ թէ զինչ որ յիս տեսեր

Երզնայն կատարէ . սա՛ տյն բա-
բաքիաս բարեաց պատճառն է .
որ նախ յովասափու զբարդամ
ցուցեալ է :

ՄԵՆ ԸՂԹԱՊՆ ԼԵՂ ԻԳՂՈՒԽ
ՆՐ . զիշխանու թին յնձնեաց իւր
կամաւն ՚ի նա . բարաքիաս նրմա
պատասխանի տայ . թէ է՞ր բըռ
նագատես զիս այսօր արքայ .
Վանզի դու որ որդի թագա-
ւորի ես . և այսմ իշխանու թե
արժանաւոր ես . կամաւ դու
՚ի դմանե զփախուստըն խընդ
րես . զիարդ զիս ըզժառայս քո
յայս հրաւիրես :

Յովասափ թագաւորն ըզնա
խըրատե . զբարաքիաս կամացն
իւր հաւան առնե . ՚ի յարեւելս
դարձեալ և աղօթս առնե . ըզ
թագն ՚ի գլուխն եդեալ արքայ
հաստատե :

յայնժամ քաղաքն ամեն ՚ի մի ժո
 ղովեալ. ՚ի յողբ և ՚ի հուաջ բարձ
 րաձայն գոչեալ. ՚ի ճիչ և յողաղակ
 յարտասուս հարեալ. և վն յո
 վասափու մեծ կոծ արարեալ.
 Օ ըկիրն ՚ի յարքայէն իւրեանց
 ողբային. լալականաց բարբառ
 անդ արձակեին. թող խաւարի
 ասեն արև և լուսին. ՚ի բաժա
 նիլ ՚ի մենջ մերոյ արքային.
 Օ ի յովասափ արքայն՝ աչաց
 մեր լոյս էր. աղբիւր յորդա
 խաղաց դրախտին կենաց էր.
 այդի քաղցրաձաշակ՝ ծառ ան
 թառամ էր. անուշահոտ վարուք՝
 վարդ մանուշակ էր.
 Պարխալ ամուր էր սն յերկրիս
 հնգուստան. սրածառ բարեաց
 եղև քրիստոսն է ու թէ. կարգաց
 և կեղեցւոյ և դմանուէ. արդար
 ՚ի դատաստան՝ վանիչ շարու թէ.

Կարգաւ . Թէ՛ ույ ՚ի հօրէն իւր
 ձե՛նա զերծաւ . կամ զխօրդ զմե
 ծուծի իւր նա ուրացաւ . և ՚ի
 փառաց իւրոց կամաւ հեռացաւ .
 Ասաց Թէ քրիստոսնեայ զհայրն
 իմ արարի . և զճննամ յամ դար
 ձուցի . լը՛ւեալ ծերրն բարզամ
 զբանն յովասափի . և օրհնեաց
 զարարիչն երկնի և երկրի .
 Յայնժամ ելեալ երկոցեանն ա
 զօթեցին . Ճաշու ժամու զխոր
 հուրդըն կատարեցին . գոհա
 ցան զայ հոգով յնծացին . և տե
 սուծք միմեանց ուրախանային .
 Աերակուր պատրաստեաց բար
 զամ և եբեր . ասաց արքայսորդի
 հրամայեալ և կեր . զի եր բանջար
 արձաւ եղջիւր զոր եբեր և աղ
 և հաց և այլ միրգ և ծառոց բեր .
 Աերեալ ուրախութեամբ զամ
 օրհնեցին . յարեան զխաղաղա

հան զաղօթան ասացին . սակաւ մի
 ննջե լով և հանդ խառ առին . յե
 տոյ զգիշե բային աղօթան արբին .
 Քարձեալ յովասափառ բարզամ
 զոյս սակ . Թե իմ օրըս մահաւ և
 կեալ հասել է . արդ դա ձե՛ս մե
 քոյն զմարմնս իմ Թաղէ և օրհ
 նաւ Թի վերջինն ՚ի քեզ մընացէ .
 Կանգնեալ մատոյց զխորհարդ
 սբ պատարագին . հաղորդեցաւ
 և ետ զայն յովասափին . անկեալ
 և աւանդեաց առ ան զհոգին . և
 Թողցի ձե՛ս մեք իւր աշակերտին .
 հարիւր և ութ տարի բարզամ
 ապրեցաւ . հ և է յանապատ կե
 ցաւ . շնորհօք ըն քի յերկրի
 ճգնեցաւ . անպատում պարզեաց
 նա արժանացաւ .


ԹՎՆ ԵՆՎԻՆԵ ԵՂՆՆԻՆ Ե ԻՆՀՈՒՆ
 ԵՐՈՒ ԻԿ

Ծորժամ Թաղեաց ըզնա որդի

արքային . ննջեալ տեսիլս ետես
ի մէջ գիշերին . զի արք լուսապայ
ծառք զբարդամ տանէին . և ՚ի
խորանս երկնից հանգուցանէին
Լ՝ՈՂ և երկուս ամոսս սկիս տե
սանէ . ք պըսակ լուսոյ՝ զոր մարդ
տեսեալ չէ . և հարց թէ այս բա
րիքս ում պատրաստեալ է . ասեն
Թէ մինըն քեզ՝ մինըն հօր քո է .
Իսկ յովասափ ասէր զայս տրտըն
ջեւով . Թէ ես բողում ամօք յերկ
րի ձգնելով . և հայր իմ մի ամիսս
ապրչեստրելով . զի արդ եզէ նըմա
հաւասարելով . Իարդամ ՚ի յերա
զին ըզնա խորատե . զովասափու
խորհուրդըն յնդիմանէ . զառա
կաց մշակին օրինակ բերե . յետ
նոցն և առաջնոց մին գոհե կան է .
Լ՝ՈՂ յովասափ կացեալ ՚ի յանա
պատին . Ղ և է ամ ձգամբ մեծա
գին . և մինչ Եթող ըզիառըս

Իւր հայրենին. քրտան և հինդ
 ամաց էր աւուրք նորին.
 11 Թսուներկու ամաց՝ հասանե
 վաղճան. յովասափու մեծի ճգնա
 լորին այն. այնմ որ Թող ըզ
 փասս անցաւ որական. է հաս
 անանց կենացն յաւիտենական
 Լիկեալ կրօնաւ ից Թաղեցին զնա.
 յետոյ բորաքիաս արքայն իմանայ
 գնացլ յանպտէն հանեցին զնա.
 տարան և Թաղեցին առ հօրըն նր.
 Իւազու մ բժշկուծի նորօք կա
 տարի. ՚ի փասս ամենազօր հօրն
 երկնաւորի. և որդւոյն միածնի
 վրկչին յի. ամենահրաշ հոգւոյն
 սբյ ճշմարտի.

* Ի Թուականիս հայոց՝ որ ութ
 հարիւրն է. ութսուներեք ՚ի
 նոյն յարաբարդեալ է. սանաչափ
 շինեցաւ այս յառաքելէ. վարդա
 պետ կոչեցեալ բաղիշեցի է.



Vertical text on the left margin, likely a page number or title in Armenian script.

Vertical text on the right margin, likely a page number or title in Armenian script.

Յի փնտրիտի որդի աչ Լորենտի աչոյ՝
Վերջի՞նք :



Լ. Գ. Լ. Գ. Տ. Ն

խաղայ՝ շահի և մե
ծութե նշան է .

Հարկիք և բարի գտանէ . անունն
երանէ հարկած . ՚ի բարի ճանա
պարհ երթայ և ուրախանայ .
Թաէ դադաթն խաղայ՝ բարի է .
և սիրի յմեներցունց . մեծութե
և փառաց հանդիպի . մեծ թագա
ւոր տեսանէ . յիշխանաց պատիւ



ԹԻՆ ԶՈՒԿԱՆԻ ԽԱՂԱՅ՝ ՄԿԱՍՈՒՅ Ի
ԽԱՂԱՅ՝ Ե ՂԱՄՂԱՅ՝ ԿԱՍՈՒՅ՝ ԿԱՍՈՒՅ՝
Ե ՂԱՍՈՒՅ՝ ԿԱՍՈՒՅ՝ ԿԱՍՈՒՅ՝ ԿԱՍՈՒՅ՝
ԿԱՍՈՒՅ՝ Ե ՄԵԾԱՆԱՅ՝ Ե Ի
ՎԱՍԱ ՀԱՍԱՆԻ՝ :

ԹԻՆ ԵՂ ՔՐԻՆԵՐԱԿԻՆ ԽԱՂԱՅ՝ ՂԵՆՅԻՆ
ՄԵԾԱՆԱՅ՝ Ե ԿԱՍՈՒՅ՝ Ե Ի ՍԳՈՅ ՂԵՐ
ԾԱՆԻ՝ Ե Ի ՀՈՒՍ ԱՆԿԱՆԻ՝ Ե ԿԱՂԱՂԱ
ԿԱՆԱՆՅ՝ Ե ՄԵՌԱՆԻ՝ :

ԹԻՆ ԶՈՒՍ ՔՐԻՆԵՐԱԿԻՆ ԽԱՂԱՅ՝ ԼԻՈՒՆ
Ե ԽԵՆՂԱՄԱՆ ՀԱՆՂԻՍՅԻ՝ ԶՆՈՐՀՔ ԱՌ
ՆՈՒ՝ ԿԱՍՈՒՅ՝ Ե ՄԵԾԱՆԵՆ՝ Ե ԽՈՐ
ՀՈՐՈՒՅ՝ ԿԱՄԿՈՒՅ՝ Ե ՂԵՆՂԱՄԱՐՈՅ՝

ԹԻՆ ԵՂՈՅ ԱՆՔԻՆ ԽԱՂԱՅ՝ ՍՐԱՏԵՆ
ԿԱՍՈՒՅ՝ Ե ԿԱՍՈՒՅ՝ Ե ԿԱՍՈՒՅ՝

ԹԻՆ ԶՈՒՍԻՆ՝ ԼԻՈՒՍՆ Ե ԽԵՆՂԱՄԱՆ
ՀԱՆՂԻՍՅԻ՝ ԵՐԿԱՐ ԿԵԱՆՔ ԵՐ
ԳՈՐԻ՝ Ե ՂԱՏԻ՝ ԿԱՄ ՀԻՆԱՆՂԱՆՈՒ
ՆՅ՝ Ե ԵՂԱՆՆԵՆ՝ Ե :

ԹԻՆ ԵՂՈՒՍԱՆՆԻՆ ԽԱՂԱՅ՝ ՀԱՄԲԱՆ
ԼՐԱՆՆԵՂԱՆ՝ Ե ԱՆՍԱՆՆԵՆ՝ Ե ԿԱՍՈՒՅ՝

նէ զնոյն տրամի և վերաւորի :
Թնէ աջ աչաց առաջի աղբիւրն
խաղայ , սրանեղութե՛ սրբոյ՝
և տրտմութե՛ հանդիպի . բայց
բարի գտանէ , կամ ընդ թշնամ
ւոյն կռուի : վերք և լաց լինի .
Թնէ ձախ աչացն՝ շատ բարւոյ
և առողջութե՛ հանդիպի : զՏե
ռաւորն տեսանէ և սրանեղի .
Թնէ աջ աչաց յետի աղբիւրն
խաղայ՝ շատ բարւոյ հանդիպի .
զիւր հեռաւորն տեսանէ և խըն
դայ . իրաց հանդիպի և վայելէ .
Թնէ ձախ աչացն՝ հարստութե՛
և մեծութե՛ հանդիպի . մտանայ
առ աւագ : տեսանէ ազգական և
խնդայ . բարութի կամ իրք ան
կանի իւրն ՚ի նմանէ . Թնէ շատ
և Թնէ սակաւ իրք գտանէ .
Թնէ աջ աչաց վերի կողմն խաղայ՝
հարստութի և հարկիք է . մեծանայ

յաւագէ . ինչ ժողովէ և ցնծու

թի կրէ . կամ արատասուէ և սրբա

նեղի . բայց շուտով զերժանի :

Թնէ ձախ աչացն՝ ասեղութի և

լացէ . բայց յետոյ բարի է . ու

բախութի և ինչ ուսն և սրտն

զութն հիւր գոյ :

Թնէ աջ աչաց ներքի կոպն խա

ղոյ՝ ՚ի հեռի ձանադարհ երթայ .

զհեռաւորն ակասնէ . բարի գը

տանէ և ինչութի :

Թնէ ձախ աչացն՝ շատ բարոյ հան

դիւղի . ցանկոյ և հասանի . ցնծայ

և ուրախանայ . կամ ազգի ասե

լութի է . լալոյ և սգոյ հանդիւղի :

Թնէ աջ սրտուղն խա՝ սրտն զութի

է . Թնէ ձախն՝ բարի գտանէ :

Թնէ աջ տէն ամէն խաղոյ , շատ

բարւոյ հանդիւղի . առողջանայ

և աղտաի ՚ի գժուարութի . ՚ի

մեռելոյ իրք անկանի իւրն և



ընտանեաց . և հեռաւորն գայ :

Թե՛ ձօխն՝ շատ և առատ բարւոյ

հանդիպի . մեծարի յաւագաց . և

գնձ գտանե . հարկիք և հարստու

թի . բայց սրանեղի և շարանայ :

Թե՛ աջակն ակն վայրօքն խա՛

ղիւր հեռաւոր մարդն տեսանե :

Թե՛ ձօխն , հիւանդանայ՝ բայց

այրի :

Թե՛ աջ վերի արտեւանուքն

խաղայ հեռաւոր մարդ գայ

խորն . արտի և լայ . բայց իւր

բանն ըստ կամայն լինի :

Թե՛ ձօխն՝ հեռաւոր կարեւոր

տեսանե և խնդայ . և ասող ջու

թի և ինդումն և բարի գտանե :

Թե՛ աջ ներքի արտեւանուքն խա

ղայ , լաց և սրանեղութիւն . կամ

մեծ բարի գտանե ՚ի մարդկանե :

Թե՛ ձօխն՝ լաց և սրանեղութի

ւն . բայց իւր հեռաւորն գայ :



ԹԻՎԵ ԱԿԱՆՈՒՄԻՆ ԽՈՒՂԱՅ՝ ԻՄԵԾ
 մարդոց հարկիք առնու :
 ԹԻՎԵ ԱՂԳԻՏ ՔԹԻՆ ԽԱ՝, ԱՍԿԱՆ
 մի հաւանդանայ . յատելութե և
 ՚ի նեղութե զերծանի . կառնոյ և
 վիճի հանդիպի՝ որ ոչ և կանակից .
 բայց զորանայ և աղատի ՚ի շարենս
 ԹԻՎԵ ՁՈՒՆ՝ ԻՐՔ ԱՆԿՈՒՆԻ՝ ԿՈՒՄ
 որդի լինի իւրն . մարտի ընդ
 Թշնամուոյն՝ բայց յաղթէ : բան
 զոր զուգե՝ բարի գայ իւրն . նոյն
 ՚ի հիւանդութենէ առողջանայ
 և սիրոյ հանդիպի :
 ԹԻՎԵ ԽՈՒՄ ՔԹԻՆ ԽՈՒՂԱՅ՝ ԻՄԵԾ
 մեծաց շահ առնու :
 ԹԻՎԵ ՔԹԻ ԾԱՅՐՆ ԽԱ՝՝ ԻՎԳՐԱՌԱՅ
 աղատի և հարստանայ :
 ԹԻՎԵ ԱՂԳԻՏ ԾԱՅՐ ՔԹԻՆ ԽՈՒՂԱՅ՝
 յաւնոց հանդիպի : ԹԻՎԵ ՁՈՒՆ՝
 յանկարծ մարդ կառնի ը ինքն :
 ԹԻՎԵ ԱՂ ՔԹՈՒՈՂՆ ԽԱ՝՝ Ը մարդոց
 սեր գնէ :

Սուրբ Գրքի Ստեփանոս Բարձրաբարձր Գրչի Կրթութեան Կողմէն
Թիւ 1. Թիւ 2. Թիւ 3. Թիւ 4. Թիւ 5. Թիւ 6. Թիւ 7. Թիւ 8. Թիւ 9. Թիւ 10.
Թիւ 11. Թիւ 12. Թիւ 13. Թիւ 14. Թիւ 15. Թիւ 16. Թիւ 17. Թիւ 18. Թիւ 19. Թիւ 20.
Թիւ 21. Թիւ 22. Թիւ 23. Թիւ 24. Թիւ 25. Թիւ 26. Թիւ 27. Թիւ 28. Թիւ 29. Թիւ 30.
Թիւ 31. Թիւ 32. Թիւ 33. Թիւ 34. Թիւ 35. Թիւ 36. Թիւ 37. Թիւ 38. Թիւ 39. Թիւ 40.
Թիւ 41. Թիւ 42. Թիւ 43. Թիւ 44. Թիւ 45. Թիւ 46. Թիւ 47. Թիւ 48. Թիւ 49. Թիւ 50.
Թիւ 51. Թիւ 52. Թիւ 53. Թիւ 54. Թիւ 55. Թիւ 56. Թիւ 57. Թիւ 58. Թիւ 59. Թիւ 60.
Թիւ 61. Թիւ 62. Թիւ 63. Թիւ 64. Թիւ 65. Թիւ 66. Թիւ 67. Թիւ 68. Թիւ 69. Թիւ 70.
Թիւ 71. Թիւ 72. Թիւ 73. Թիւ 74. Թիւ 75. Թիւ 76. Թիւ 77. Թիւ 78. Թիւ 79. Թիւ 80.
Թիւ 81. Թիւ 82. Թիւ 83. Թիւ 84. Թիւ 85. Թիւ 86. Թիւ 87. Թիւ 88. Թիւ 89. Թիւ 90.
Թիւ 91. Թիւ 92. Թիւ 93. Թիւ 94. Թիւ 95. Թիւ 96. Թիւ 97. Թիւ 98. Թիւ 99. Թիւ 100.

վերք լինի իւրն . սրահաս ցաւս
հանդիպի և շուտով մեռանի .
Թե՛ աջ դի՛հ կըսփանն խա՛ դառ
նայ իւր ճանապարհէն . սրահեշ
տի և շատ բարի լինի իւրեան .
կամ սահաւ մի տկարանայ : Թե՛
ձախն՝ հետ իւր աղգին կու՛նի .
հիւանդանայ , բայց ապրի : ըս
ղակ գայ իւրն և ուրախանայ .
Թե՛ աջ դի՛հ կըսկին խա՛ , վի՛ճի
և կու՛նի ընդ իւր աղգին . սա
կաւ մի տկարանայ՝ և սրահեշտի .
՚ի նեղութի անկանի՝ և ան փրք
կէ . ՚ի ցաւոց և ՚ի շարէ ազատի .
Թե՛ ձախն՝ հեռաւոր ճանապար
հորդ գայ իւր աղգէն . կամ հե
ռաւոր ճանապարհ երթայ . ՚ի սա
կաւ ցաւոց ողջանայ և խնդայ .
Թե՛ աջ տկանջն խա՛՝ հո՛քաւ լսէ
յաղգականէ . խնդութի և լիս
թի է . յանկարծ բարւոյ հանդի

Երբ որ աստուծոյ զմեզմէն շնորհալի
հարկաւ արձանայ . բայց տկարա
նայ՝ կամ աղքատեանն մեռանի .
Սակ ձիւն՝ հեռաւորն գայ . յի
շէն զինքն ՚ի բարին ՚ի հեռու
տեղ . զնոյն բարի զոյց լսե .
յանկարծ ինդումի ե մեծ ա
ռողջութի ե . աչք աւազաց իւրն
բազրանայ . ընդակ գայ իւրն
ուստի ակն ոչ ունի :

Սակ աջ ականջի գմակն խաղայ ,
ըմարդ գաստխաղի Սակ ձախն՝
զինքն ՚ի բարին յիշեն :

Սակ աջ ականջի վերի գիհն խա՛ ,
՚ի հոգս անկանի : Սակ ձախն՝
յանկարծ գանձ գտանե :

Սակ աջ ականջի տակն խա՛ , բարի
գտանե՛ ուստի ակն ոչ ունի :

Սակ ձախն՝ չե բարի :

Սակ ամբ բերանն խա՛ , ՚ի սրտե սի
բեցեալ սերելի հեռաւոր համ

բուրե և մեծարի 'ի սիրելչոյն :

Թե լեզուն խաղայ՝ կռիւ և խառ
վաթի է . ասելաւթի և աղաղակ
Թշնամի խօսի ը ինքն . սրտնեղու
Թե և վիճոյ նշան է :

Թե աջ դիհ լեզուին խա՛հա
բըտանայ : Թե ձախն՝ բարւոյ
հանդիպի :

Թե լեզուն ամենն խաղայ՝ 'ի
մատնողաց և զբարտողաց զգոյշ
լեր և պատրաստ կաց :

Թե վերի շուրթն խա՛հա
լսե սպնման . վեճե և խառվաթի
կռիւ և ասելաւթի . սրտնեղու
և զեն . կամ հեռաւոր գայ իւրն
ճօշք է . վատ զրոյց լսե և տրամի

Թե ներքինն՝ սրտնեղի . վիճի և
յողթե . ում ցնկայ՝ հասանի . հե
ռաւորն գայ . և բարւոյ նշան է :

Թե շրթանց երկու դիհն խաղայ՝
խօսք լսե և վիճի . ինդայ 'ի զա

Լակե . բամբասի 'ի մարդկանե .
 զեւե' տրամաթի և սուգ .
 Թմե ներքի և վերի շրթանքն
 խաղայ' սիրելի համբուրե .
 Թմե աջ գիհ վերի շրթանն խա' .
 Կախ լինի և խօսք . 'ի մարդկանե
 սրտնեղի և 'ի սուգ անկանի . կամ
 զաւակ լինի խնդման . սրտնեշ
 ախ և ուրախանայ . Թմե ձախն'
 սեր և խնդաւթի և խաղաղութի
 է . զաւակ լինի բարի և շնորհնոր .
 յանկարծ խնդայ 'ի զաւակե . վճա
 րե զպարտս և սիրելի գայ իւրն .
 Թմե վերի շրթանց մէջն խաղայ ,
 համբուրե զով ուզե . զօրոյց լսե
 և տրամի . Թմե ներքին' տրամի .
 Թմե աջ գիհ ներքի շրթանն խա' .
 սրտնեշախ և ուրախանայ . Թմե
 ձախն' ուրախանայ .
 Թմե աջ գիհ շրթանն խաղայ ,
 իւր անձին առողջութի է . Թմե

Զախն՝ կարիճ տրղայ լինի իւրն :
 Թե շրթներն խաղայ՝ բարի և
 ըռզակի գայ իւրն :
 Թե աջ դիճ բերանոյ կապն խա՞
 բարձրնայ և կոխե զթշնամին իւր
 Թե ձօխն՝ յաղթե թշնամւոյն :
 Ի բարի հեռաւոր տեղ երթայ :
 կոխե զչարկամն և մեծանայ :
 Թե աջ դիճ վերին բերանոյն
 խա՞ գանձ գտանե . սրտհեշտի՞
 և բարոյ հանդիպի . ըռզակի և
 մեծութն : Թե ձօխն՝ յաղթե
 թշնամւոյն և բարւոյ հանդիպի .
 հեռաւորն գայ և զօրանայ :
 Թե առաստաղն խաղայ՝ սրտնե
 զանք անկանի :
 Թե աջ դիճ առաստաղին խաղայ՝
 բարի գտանե և ուրախանայ :
 Թե ձօխն՝ պակաս մի հիւանդա
 նայ և շուտով առողջանայ :
 Թե աջ թուչն խա՞ Ի թշնամեաց

պատրաստ կաց, թվէ ձախն՝ մեծ
բարութի գտանեք :

Թվէ աջ երախն խաղայ, հարբու
տութեան նշան է :

Թվէ ձախն՝ իրաց մի ըռզակի :

Թվէ աջ գիհ կլափանն խաղայ,
սրահեշտի և ուրախանայ, և
աչքն շատ բարի տեսնու :

Թվէ ձախն՝ ըռզակ գտանեք :

Թվէ կլափան ծայրն խա՛, ոսկւոյ
և կուճաշի հանդիպի :

Թվէ կլափն խա՛, շահոյ նշան է :

Թվէ աջ խաճ ծիծն խաղայ,
առողջութիւն է :

Թվէ ձախն՝ ինդայ և ուրախանայ :

Թվէ փողքն խաղայ, սրանեղու
թէ զտոյց լսէ :

Թվէ աջ գիհ վզին խաղայ, ՚ի հե
ուստ տեղաց շահ գոյ իւրն, շատ
կուճաշի հանդիպի և ըռզակի տի
բանայ, մեծ ութի առնու՝ ուստի

ակն ոչ ունի . և ուրախանայ .

Թև ձախն՝ գլխաւոր լինի և խըն
դայ . մեծութի առնու . հարըս

տանայ՝ և աչքն շատ բարի տես
նու . խնդութի և ողորմութի

գտանէ . կամ անպատեհ բան գոր
ծե . և յաւագէ կամ յազգե՝

ընդ վայր զօրոյց լսէ .

Թև ամէն վիզն խաղայ , մեծ
նեղութի գայ իւր վերայ . իւր

կեանքն պակասի . կամ սրով հա
տանի վիզն և տունն այրի .

Թև աջ գիհ թիկն ամէջն խաղայ՝
սրանեղանք է . Թև ձախն՝ բան

առնէ՝ զոր չէ արժան .

Թև աջ թիկն խաղայ , յորոգայ
Թէ Թող պատրաստ կենայ .

Թև ձախն՝ խնդայ իւր սրտովն .
Թև Թիկն ամէջն խաղայ , հարըս

տանայ ինքն .

Թև աջ անդակն խաղայ , իւր



ձեռաց գործոյն ընդակի :

Թե ձախն՝ մեծ ութն հանդիպի :

Խնդութն և սիրոյ նշան է :

Թե աջ բեճն խաղայ . հարըս

տանայ և սրահեշտի . կամ ցը

նորք է և արամութիւն . պատ

րաստ կացցէ 'ի շարե և 'ի կնոջէ :

Թե ձախն՝ առողջութի է . նոր

ագանի . բարի լինի իւրն . կամ

անպատէ հ բան գործէ :

Թե աջ թիկուներն խա՛, նոր ա

գանի : Թե ձախն՝ խնդիւրք իւր

կատարի :

Թե աջ ծղին խաղայ, գլխացաւի

անկանի և լաւանայ . զնոյն 'ի սափ

րայե ցաւոյ հանդիպի . սաւտայ

հարկանէ : Թե ձախն՝ խնդումն

և ցնծութի է . զինչ բարի ուզէ՝

գտանէ յընկերաց . պարզե 'ի

մարդկանէ . շահի և ընդակի :

Թե աջ արմունկն խա՛, սիրեւոյ



Հանդիպի. սերէ ըստ և բարի. ՚ի
 բան արբուճեաց մտանէ. կամ սա
 կաւ մի տեսարանաց. գլուխն ցաւի
 և տրամի ՚ի ցունաց. և հիւանդաց.
 և ան հանէ ՚ի հիւանդութի.
 թէն ձախն՝ բարի է և խնդումն.
 հիւրն գնայ՝ և զերծանի. ցնծաց
 և սրտհեշտի. կամ յուտաց վէ
 բաւորի՝ և հիւանդանաց.
 թէն աջ բազումն խաղայ, զայր և
 կին համբարէ. ՚ի կնոջն սիրի.
 հասանէ խնդումն. և սիրելի
 գտանէ. թէն ձախն՝ մեծ բար
 ւոյ և շահի հանդիպի. բարի և
 շտրհաւոր է. պատուի ՚ի մարդ
 կանէ. և բողակ գտանէ.
 թէն աջ թեւն խաղայ, ցաւոց
 և նեղութեան հանդիպի.
 թէն ձախն՝ ՚ի զնաան մտանէ.
 թէն աջ բազկի ձուկն խաղայ,
 զլիտացաւութեան հանդիպի.

կից է. աղէկ լինի իւրն. բարւոյ
և գանձի հանդիպի. զինչ ուզէ՝
առնու. ստեն սուտ իրք վասն
իւր. և ինքն ՚ի մեղք անկանի.
Իմէ աջ խաժ լ մատն խա՞, շարի
հանդիպի. գէշ խօսք լսէ. ճօշան
զինքն. ՚ի զուր վերաւորի. ՚ի լե
զու անկանի. վաս խօսին զինքն
առ մարդիկ. Իմէ ձախն՝ բարի
է և ուրախութի. խորհուրդ բա
րի խորհի. գուժ գտանէ. գովք
լսէ. իրք զոր կամի՝ գտանէ.
Իմէ աջ միջի մատն խա՞, վեճ ան
կանի. վիճի և յաղթէ թշնամոյն.
բարի գտանէ՝ ուստի ակն ոչ ու
նի. փոխի ՚ի մեծ բան. հարբս
տութի և շատ ընդակ լինի իւրն
՚ի մեծէ. Իմէ ձախն՝ կռուոյ և
սրանեղութե նշան է. վիճի և
յաղթէ. իրք գտանէ և խնդայ.
զերթանի ՚ի տրամութե. և բարի
գայ իւր վր. 250 Իմէ

Հարստանայ և խընդայ . կամ շար
գայ իւրն՝ պատրաստ կացցէ .
Թէ՛ Զախն՝ բարի գտանէ՛ ուստի
ակն ոչ ունի . ՚ի մեծ ճարգվէ
հարկիք առնու . պարգևս ՚ի թա
գաւորե . խնդայ և հարստանայ .
ամենն բարի լինի իւրն :

Թէ՛ աջ ձեռաց ամեն մատուցքն
խաղան՝ տրտմի . բայց յետոյ սրտ
հեշտութի գայ իւրն . շարն հեռա
նայ իւրմէն . և ան ընդ ինքն է .
Թէ՛ Զախն՝ գանձուց և պատուոյ
հանդիպի :

Թէ՛ աջ ձեռաց վերի թաթն իսա՛
նախանձ և ճիկր գնեն ը ինքն .
և յաղթէ լ շխարեն :

Թէ՛ աջ ուսն իսա՛ , առողջութե՛
նշան է . և նոր հալաւս ազանի :

Թէ՛ Զախն՝ իրք անկանի իւրն և
խնդայ . պարգևս ՚ի յոյ առնու .
պատուի ՚ի մեծաց :

ԹԻՎԵՆ ԵՄԻՆԻ ԽԱՎ՝, ԱՌՃԿԻ Ե ԱՐ
ՐԱԽԱՆԱՅ. ԵՂԳԱԿԱՆՔԻՆ ՂՕՐԱՆԱՆԻ.
ՍԻՐԵՆԻՔԻՆ ՔԱՂՄԱՆԱՆ. ԵՆՅԻՆ Ե ԺՎ
ՆՕԹՔ ՇԱՐԱՆԱՆԻ. ԹԻՎԵ ԶՈՒՆԻՆ՝ ՀԵ
ԱՍԷՍՐ ԺԱՐԳ ՍԵՍԱՆԷ. Ե յԸՆՍՏԱ
ՆԵՍԳ ԽՆԴՊԱՅ. ԸՆԺ ԱԼԹԵ ՀՍԱՍԱՆԻ.
ԿԱՄ ՎԻՃՈՅ ՀԱՆԳԻՊՅԻ. Ե ԱԿԱՄԱՅ
ՎԻՐԱՆՍՐԻ՝ Ե ՂԺՈՆՍՐԻ.

ԹԻՎԵ ԱՂ ՂԻՏ ԿՐԺՈՅՆ ԽԱՎ՝ ՔԱՐԵՍՅ
ՀԱՆԳԻՊՅԻ. Ի ՇԱՐԵ Ե Ի ՀՈԳՈՅ Ա
ՂԱՍԻ. ԿԱՄԱՇՅԻ ՍԻՐՆԱՅ. Ե ԸՆԺ ԱԼ
ԹԵ ՀՍԱՍԱՆԻ. ԿԱՄ ԳՈՐԺ ԳՈՐԺ Ե՝
ՂՈՐ ԶԵ ԱՐԺԱՆ. Ե ԱՊԳՇՅԱՆԷ ՇԱՍԻ
ԹԻՎԵ ԶՈՒՆԻՆ՝ ԱՄՔԵԱՆՍ ՍԻՐԵՆԻ ՂԵՍ.
ՂՇԱՐԻՆ ՈՐ ԳԱՂՈՅ Ե՝ ԱԺ ԱՆԿՈՇՄ
ՆԵ յԻՆ ՐԱԼԵՆ.

ԹԻՎԵ ԱՄԸՆ ԿԱՐԺՔԻՆ ԽԱՎ՝, ՂՈՐ ՍԻ
ՐԵ՝ ՂԻՐԿԱ ԱՐԿԱՆԵ. ԽՆԴՊԱՆ
ՇԱՍԱՂՏ Ե. ՔԵՐԿՐԱՄԻ ԱՆՃԻՆ.
ՔԱՐԵՍՅ ԱՆԷՍԻՔ Ե. ՀԱՐՍԱՍԱՆԱՅ
Ե ՍԵՐ ԳՍԱՆԵ.

ԹՎԵ աջ դի՛Տ սրտին խա՛", բաղճա
 նան սիրելիքն՝ և ուրախանայ .
 ԹՎԵ ձախն՝ արամուծի՛ հասանի .
 ԹՎԵ սիրան խա՛", սրանեղուծի՛
 Ե և հոգ . իւր մարդն մեռանի .
 յանկարծ սրտանեղուծէ և արա
 մուծէ հանդիպի .
 ԹՎԵ աջ դի՛Տ Թեի ներքի կողմն
 խաղայ՝ յօտար երկիր երթայ .
 ԹՎԵ ձախն՝ հիւանդանայ՝ և շուտ
 ողջանայ .
 ԹՎԵ աջ դի՛Տ կողիցն խաղայ, շա
 հու հանդիպի . ՚ի տեղւոյն փո
 խի և ՚ի ձանապարհ երթայ . սա
 կաւ մի տկարանայ՝ բայց յառնէ .
 ԹՎԵ ձախն՝ իւրն որդի ծնանի .
 կամ զնոյն ՚ի ձանապարհ երթայ .
 փոփոխումն է տեղաց ՚ի տեղ .
 ԹՎԵ աջ ողն խաղայ, կին առ
 նու և զաւակ խնդման լինի .
 ԹՎԵ ձախն՝ զաւակ բարի լինի
 Իւրն .

Իւրն . և մեծ ուժիւն գտանէ :
 Թուէ մէջ սղանն խա՛ բարի է իւրն :
 Թուէ աջ մտանն խաղայ , հարստա ,
 նայ , Թուէ ձախն՝ նոյն է :
 Թուէ երկու մտանքն խաղան՝ հար
 րըստութի է իւրն :
 Թուէ աջ կուշտն խա՛ , մեծ ուժի
 գտանէ . կին առնու բարի . բարձ
 րուի և խնդուի է . զոր ինչ խնդ
 րէ 'ի յոյ՛ կատարի : Թուէ ձախն ,
 զնոյն կին առնու և զաւակ խընդ
 ման լինի . 'ի հագոց զերժանի .
 սրտհեշտի և մեծ լինի :
 Թուէ աջ գիհ փորուն խաղայ ,
 մեծանայ և ընդակի :
 Թուէ ձախն՝ շատ լայ և տրամի :
 Թուէ ամեն փորն խա՛ , զինչ ուղե
 'ի յոյ՛ տայ նմա ան :
 Թուէ փորն խա՛ , բարի է և մեծ ու
 թի . Թուէ աջ կողն խա՛ , 'ի հի
 շանդութի աղատի : Թուէ ձախն ,

Եւ յայլ ճանապարհ երթայ :
 Թե՛ ան աջ դի՛հ կողմն խա՛, բարի
 է իւրն : Թե՛ ան ճախն՝ նոյն է :
 Թե՛ ան աջ քոյն խաղայ, ու բախու
 թի մեծ գտանե՛ : Թե՛ ան ճախն՝
 որդի լինի իւրեան : կամ՝ ի մա
 հաւ երկիւղէ ազատի :
 Թե՛ ան պարան խա՛, շահ գայ իւրն :
 իւր բարեքն բաղմանան, զերծ ա
 նի ՚ի հողոց : կին աւնու : կամ
 ՚ի կնոջն խնդայ :
 Թե՛ ան աջ դի՛հ փոքրափորն խաղայ՝
 հարստանայ : Թե՛ ան ճախն՝ ընդակի
 ՚ի յոյ : և յաղքատութի՛ ազատի :
 Թե՛ ան փոքր փորն անկնն խա՛ բարի
 զօրոց լսե՛ և խնդայ : բաղմանան
 իւր ինչքն : բարի կնոջ դիպի :
 հարստանայ և մեծ անայ :
 Թե՛ ան երանքն խաղայ, մեծ բարի
 լինի յաւազայ : ան անայ զխնդրե
 լին : զկնչ ուղե՛ աւնու : խոր
 մօ՛, 256 հար

